ժանեն աշխատանքը: Դուք այն առաքինի կանանցից մէկն էք, որ պէտք է օրինակ տար ձեր քոյրերին: Հանգամանքները ձգեցին ձեզ բոլորովին օտար շրջանում. դուք ընկաք թշնամի բանակի մէջ: Մի ուրիշը ձեր տեղը կարող էր բոլորովին կորած լինել: Բայց դուք ապացուցեցիք, որ մարդ կարող է պիտանի լինել իր ազգին, որտեղ եւ լինէր նա: Մի ժամանակ հայ տիկինները զարդարում էին պարսից թագաւորների եւ մինչեւ անգամ մոնղոլների խաների կանանոցները: Եւ այդ տիկինները աւելի օգուտ էին բերում իրանց հայրենիքին, քան ժամանակի թուլասիրտ հայ իշխանները: Նրանք շատ անգամ հեռացնում էին իրանց արիւնարբու ամուսինների գազանային բարբարոսութիւնները խղճուկ Հայաստանից, կամ նրանց շնորհիւ Հայաստանը վայելում էր այս եւ այն իրաւունքները: Դուք, տիկին, նրանցից մէկն էք:

Տիկնոջ գեղեցիկ աչքերի մէջ փայլեց ամօթխածութեան կրակը: Ասլանի խօսքերը բաւական փաղաքշական երեւացին նրան: Նա ոչինչ չպատասխանեց, բայց եղբայրը, որ բոլոր ժամանակ լուռ էր, հարցրեց.

— Ինձ շատ զարմացնում է մի բան, թէ որպէ՞ս Կարապետ հայր սուրբին կամ նրա համախոհներին կարող էր յայտնի լինել գաղտնիքը:

— Շատ հասարակ կերպով, — պատասխանեց Ասլանը եւ պատմեց անցեալ դէպքերից մէկը, որը յատկապէս ինձ համար՝ թէ՛ շատ հետաքրքրական էր եւ թէ՛ շատ ամօթալի...

Դու յիշո՞ւմ ես, ընթերցող, տիրամօր վանքի տօնախբութեան ժամանակ, այն խաղաղ խորհրդաւոր գիշերը, երբ ես եւ գեղեցիկ Մարօն, նստած նրանց վրանի մուտքի հանդէպ, քաղցր խօսակցութեան մէջ էինք: Ուխտաւորների ընդարձակ բանակի մէջ տիրում էր խորին լռութիւն: Յանկարծ հեռոից լսելի եղաւ երգեցեղութեան մի հիանալի ձայն: «Այդ ճգնաւորի ձայնն է», ասաց Մարօն: Ես «ճգնաւորին» ցերեկով տեսել էի Կաթնաղբիւրի ձորում, իսկ նոյն գիշերը, փոքր-ինչ առաջ, ես տեսայ նրան իմ քեռի Պետրոսի վրանում, նրա եւ տէր Թոդիկի հետ խօսելիս: Ի՞նչ խորհուրդ ունէին, ես չգիտեմ, որովհետեւ ես շուտով թողի եւ հեռացայ նրանց մօտից: Երբ Մարօն ասաց ինձ՝ «ճգնաւորի ձայնն է», ես հետաքրքրոեցայ այդ խորհրդաւոր ճգնաւորով, եւ աւելի մեծ եղաւ իմ զարմանքը, երբ Մարօն յայտնեց ինձ, որ նա Ասլանն է: Յետոյ մենք սկսեցինք երկար խօսել ծպտեալ Ասլանի վրայ, որ լեռնային ճգնաւորի կերպարանքով թափառում էր վանքի շրջակայքում եւ ուխտաւորների բանակի մէջ: Բայց մենք այնքան անզգոյշ էինք, որ ամենեւին չէինք մտածում, որ վրանի միջից երկու սուր ականջներ լսում էին մեր խօսակցութիւնը: Դա պառաւ Խաթունն էր, որին քնած էինք կարծում: Դու յիշո՞ւմ ես, ընթերցող, այն սոսկալի սպառնալիքները, որ զայրացած Մարօն կարդում էր